

ղեցիները ի միութիւն յորդորելու, միւս կողմէն հեթանոս ժողովուրդներու մէջ քրիստոնէութիւնը քարոզելու: Գրիգոր ԺԴ. Քահանայապետ հարկ տեսաւ 1623ին հաստատել Տարածման Հաւատոյ Ս. Ժողովը, որուն մասնաւոր խնամքին յանձնուեցաւ այնուհետեւ եկեղեցիներու միութեան հոգը:

Պարսկաստանի մէջ կը գործէին ԺԷ. դարու սկիզբը Աւգոստինեանք, Բոկոտն Կարմեղեանք եւ Կապուչինք, որոնք սերտ յարաբերութեան մէջ կ'ապրէին Հայոց հետ:

Հայոց Հռոմի Եկեղեցւոյ հետ Միութեան հարցը լուրջ խորհրդածութեան առարկայ եղած էր արդէն Փլորենտեան ժողովի մէջ (1439): Հայոց կաթողիկոսի պատգամաւորները ունեցած էին բանակցութիւն Եւգինիոս Դ.ի հետ եւ կնքած Համաձայնութեան սահմանադրութիւն մը: Այս Համաձայնագիրը այնուհետեւ յաճախ կը ներկայացուէր Հայոց, ամէն անգամ որ խօսք կ'ըլլար Միութեան մասին:

Միութեան հարցը նոր բանակցութեանց առարկայ եղաւ մասնաւորապէս ԺԶ. դարու վերջին եւ ԺԷ. դարու առաջին կէսին: 1585ին Սիդոնի արքեպիսկոպոսը անձամբ ներկայացած էր Սիւ, բանակցելու Ազարիա կաթողիկոսին հետ²: ԺԷ. դարու սկիզբը Միութեան խնդրով ոգեւորուած էին Յովհաննէս Խուլ եւ

² Հմմտ. Հ. Ա. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս. Վիեննա 1878, էջ 159—160 եւ 302—313: